ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 43 - Ա **26 հունվարի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ՍԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 55-րդ, 63-րդ, 66-րդ և 116-րդ հոդվածների, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ, 19-րդ և 68-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի Ն< 728 հրամանագրի 1.6-րդ և 1.17-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 2-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> N 815-Ն որոշումը

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Սևանի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերի փոխարկման արդյունքները Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Սևանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի, այն է՝ ընկերության կողմից տեղաբաշխված թվով 10887 /տասը հազար ութ հարյուր ութսունյոթ/ հատ 10.000 /տասը հազար/ դրամ անվանական արժեքով հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերը փոխարկվում են <<Սևանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկված թվով 10887 /տասը հազար ութ հարյուր ութսունյոթ/ հատ 10.000 /տասը հազար/ դրամ անվանական արժեքով հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերի.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Սևանի պոլիկլինիկա>> պետական փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերի փոխարկման արդյունքները Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Սևանի

բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի, այն է ընկերության կողմից տեղաբաշխված թվով 9944 /ինը հազար ինը հարյուր քառասունչորս/ հատ 5000 /հինգ հազար/ դրամ անվանական արժեքով հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերը փոխարկվում են Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Սևանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկված թվով 21507 /քսանմեկ հազար հինգ հարյուր յոթ/ հատ 10.000 /տասը հազար/ դրամ անվանական արժեքով հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերի.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Սևանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկված հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները՝ համաձայն սույն որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերի, և տեղաբաշխման արդյունքում ձևավորված կանոնադրական կապիտալի մեծությունը՝ 32.394.000 /երեսուներկու միլիոն երեք հարյուր իննսունչորս հազար/ դրամ, որը կազմում է 32394 /երեսուներկու հազար երեք հարյուր իննսունչորս/ հատ 10.000 /տաս հազար/ դրամ անվանական արժեքով հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսեր:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Սևանի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերությունը և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Սևանի պոլիկլինիկա>> պետական փակ բաժնետիրական ընկերությունը միաձուլման ձևով վերակազմակերպել՝ ստեղծելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Սևանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն:

3. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Սևանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հիմնական տեսակն է բժշկական օգնության և սպասարկման /հիվանդանոցային, արտահիվանդանոցային, շտապ բուժօգնություն և այլն/ կազմակերպումը:

4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Սևանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

5. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Սևանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունում տնօրենների խորհուրդ չի ձևավորվում: <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով ընկերության տնօրենների խորհրդին վերապահված հարցերի լուծումը իրականացնում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը, բացի ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովների գումարման հետ կապված հարցերից, որոնց լուծումը վերապահվում է ընկերության հիմնադրի կողմից լիազորված պետական կառավարման մարմնի ղեկավարին կամ նրա ներկայացուցչին:

6. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Սևանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Անուշ Պողոսյանին /անձնագիր՝ AM 0810765, տրված 18.07.2012թ., 008 կողմից/:

7. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Սևանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հիմնադրի կողմից լիազորված պետական կառավարման մարմնի կողմից ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովներին 100 տոկոս ձայնի իրավունքով մասնակցելու համար լիազորել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ալբերտ Աղեկյանին, որին վերապահվում են ընկերության

բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը վերապահված բոլոր հարցերի լուծումը, բացի ընկերության լուծարման, վերակազմակերպման, կանոնադրական կապիտալի փոփոխման, գործադիր մարմնի ձևավորման և խոշոր գործարքների կնքման հետ կապված հարցերի լուծումից:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ